ծերունին երկիւղածութեամբ մօտենում է փայտակոյտին, մրմնջելով յիշեալ աղօթքը, և տալիս է կրակ։ Այն ժամանակ. ամենի աչքերը սևեռվում են փայտակոյտի արծարծուող բոցեղէն լեզուների վերայ։ Որքան այրումը սաստկանում է, այնքան էլ աւելանում է աղօթողների եռանդը։ Կրակը հանգչելիս նոյն լուսով վառում են հանգցրած ճրագները և հայոց Տեառնընդառաջի սովորութեան պէս շատերը այդ լուսից բաժին են տանում իրանց տան ճրագները վառելու։ Շատերը այրում են իւրեանց քղանցքի անկիւնը։ Փայտակոյտի մնացորդ, մոխիրը շաղ են տալիս արտերումը։

Մանաւոր մատաղներ միշտ լինում են, բայց Գարա—Գոյունցիք մի ընդհանուր մատաղի արարողութիւն ունին, որ տարին մի անգամ են կատարում։

Այդ արարողութիւնը առանց կրօնաւորի չի կարելի կատարել, դրա համար գալիս է կրօնաւորը, որին շէյխ են անուանում, իւր ձեռքովը մորթում է մատաղացուն, եփում է, առանց ոսկորները կոտորելու, այնքան, մինչև ոսկորները ամբողջ բաժանվում են մսից, աւելացնելով մատաղի վերայ գինի և հաց նա հաւասարապէս բաժանում է բոլոր հաւատացեալներին, բացի երեխաները։ Շէյխը իւր ձեռքովը մատաղի ոսկորները թաղում է։